



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

N 96 - Ա
22 մայիսի 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ԵՎ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 197-Ա
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N 919-Ն, 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն, 2010 թվականի հունիսի 24-ի N 824-Ն, 2003 թվականի հոկտեմբերի 16-ի N 1304-Ն, 2005 թվականի նոյեմբերի 3-ի N 1925-Ն, 2004 թվականի հոկտեմբերի 29-ի N 1494-Ն, 2012 թվականի մարտի 19-ի N 279-Ն և 2010 թվականի հուլիսի 8-ի N 855 -Ն որոշումները

որոշում եմ՝

1. Հաստատել՝

- 1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանը՝ համաձայն N 1 հավելվածի.
- 2) ՀԱԷԿ-ի միջուկային և /կամ/ ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գործելու պլանը՝ համաձայն N 2 հավելվածի.
- 3) ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գործելու պլանը՝ համաձայն N3 հավելվածի.
- 4) ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի և փլուզման դեպքում Հանրապետության Գեղարքունիքի մարզի գործելու պլանը՝ համաձայն N 4 հավելվածի.
- 5) խոշոր հրդեհապայթյունավտանգ վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գործելու պլանը՝ համաձայն N 5 հավելվածի.
- 6) գարնանային վարարումների, ջրհեղեղների և սելավի դեպքում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գործելու պլանը՝ համաձայն N 6 հավելվածի.

- 7) ձևաքի ժամանակ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գործելու պլանը՝ համաձայն N 7 հավելվածի.
- 8) խոշոր անտառային հրդեհների առաջացման դեպքում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գործելու պլանը՝ համաձայն N 8 հավելվածի.
- 9) խոշոր քարաթափումների և սողանքի առաջացման ժամանակ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գործելու պլանը՝ համաձայն N 9 հավելվածի.
- 10) կոմունալ էներգետիկ ցանցերում խոշոր վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գործելու պլանը՝ համաձայն N 10 հավելվածի.
- 11) համաճարակների դեպքում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գործելու պլանը՝ համաձայն N 11 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Մ. Բարսեղյանին՝

1) յուրաքանչյուր տարի հունվարի 1-ի դրությամբ կազմակերպել սույն որոշման համապատասխան հավելվածներում անհրաժեշտ ճշգրտումներ կատարելու գործընթացը, ճշգրտմանը ներգրավել մարզի բոլոր շահագրգիռ մարմիններին, նախապատրաստել և ներկայացնել փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծ.

2) մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը ճշգրտված տարբերակը առաքել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանում ընդգրկված մարմիններին:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի հոկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանը հաստատելու մասին» N 197-Ա որոշումը:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Մ. Բարսեղյանի վրա:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

 Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Գավառ